ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԴՐԱՄԱՅՈՒՄ

ԼՈՒՍԻՆԷ ԳԱԼՍՏԵԱՆ
բ.գ.թ., Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարտիզունու ան. Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր - պատմական թատրերգութիւն, Առաջին Հանրապետութիւն, անկում, ողբերգութիւն, վրիժառութիւն:

Ключевые слова: историческая драматургия, Первая Республика, падение, трагедия, возмездие.

Key words: historical drama, the First Republic, fall, tragedy, retribution.

Խորհրդահայ գրականագիտութիւնը, վերլուծութեան պատմական մեթոդի նախապատուութեամբ հանդերձ, պիտի խուսափէր (հասկանալի պատճառներով) Լեւոն Շանթի պատմական «թատերակները» դիտարկել պատմութեան կոնտեքստում, չբացայայտելու համար պատմութեան՝ շուրջ եօթանասուն տարի թաքնուած ճշմարտութիւնը: Անկարելի էր ոչ միայն քննել, այլեւ այդ ստեղծագործութիւններում մատնանշել պատմական անցեալի եւ քսաներորդ դարի առաջին երկու տասնամեակներում հայ ժողովրդի պատմութեան բախտորոշ իրադարձութիւնների՝ խորհրդապաշտութեամբ քօղարկուած զուգահեռը, ուստի շահեկան էր դրանց վերլուծութիւնը հենց մաքուր արուեստի՝ խորհրդապաշտութեան տեսանկիւնից:

Լ. Շանթի պատմական թատրերգութեան լաւագոյն նմուշներից մէկը՝ «Ինկած բերդի իշխանուհին» ողբերգութիւնը, անդրադարձ է տասներկուերորդ դարի Կիլիկիայի թագաւորութեան անկմանը յաջորդող իրադարձութիւնների՝ առաջին հայեացքից Կիլիկեան Հայաստանի պատմութեան ոչ այնքան նշանակալից մի իրողութեան՝ Քեսունի Գող Վասիլ իշխանի կողմից մի ամրոցի գրաւման պատմութեանը: Լ. Շանթն առ հասարակ պատմական աննշան թուացող իրադարձութիւնները պատմական, ազգային, սոցիալական եւ ընդհանրապէս համամարդկային մեծ ընդհանրացումների հասցնելու վարպետ է: Իսկ այս իրադարձութեան մէջ նա խտացրել ու իրար է կապել իր ժամանակաշրջանի պատմական բազմաթիւ դէպքեր,

որոնք ռէալիստական վէպի մէջ, ըստ էութեան, մի ամբողջ էպոպէայի նիւթ կարող էին լինել:

Միւս կողմից, որքան էլ պարադոքսալ հնչի, փաստ է, որ անդրադարձը պատմական նիւթին ոչ միայն ներկայի խնդիրները քօղարկուած կերպով արծարծելու, այլեւ՝ որպէս անցեալ, այսինքն՝ ամբողջացած իրականութիւն, դեռ ընթացքի մէջ գտնուող, դեռ չամբողջացած ներկայի իմաստն ամբողջութեամբ բացայայտելու միջոց է: Պատմական դէպքերի խորհրդապաշտական մատուցումը եթէ ոչ բազմիմաստութիւն, ապա առնուազն երկիմաստութիւն է հաղորդում ստեղծագործութեանը. խորհրդանիշը՝ որպէս պատկեր, բազմաթիւ նշանակութիւններ կարող է ունենալ, եւ հենց դրա շնորհիւ է, որ ստեղծագործութիւնը ազատագրւում է պատմութեան նեղ կոնտեքստից ու բռնում «անմահութեան» ուղին:

Հետաքրքրական ենթաշերտեր են բացայայտւում «Ինկած բերդի իշխանուհին» թատերգութեան խորհրդանիշերի ու այլասացութիւնների պատմական իմաստների քննութեան արդիւնքում: Այս իմաստով Լ. Շանթի դրաման ոչ միայն պատմական անցեալի եւ ներկայի կապն է ցոյց տալիս, այլեւ զարմանալիօրէն մարգարէական հնչեղութիւն է ստանում: Նախ՝ Ցեղասպանութիւն, ապա՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկում, նրան յաջորդած խորհրդային իշխանութեան՝ բռնատիրութեան հաստատում եւ այդ բռնատիրութեան անկման կանխատեսում:

Գրականագէտ Սամուէլ Մուրադեանը Լ. Շանթի ծննդեան հարիւր քառասունամեակին նուիրուած գիտաժողովի իր զեկուցման տեքստում արդէն իսկ անդրադարձել է Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկման արձագանգներին Լ. Շանթի այս եւ «Օշին Պայլ» թատերակներում: Յարգարժան գրականագէտը, սակայն, հիմնականում խօսում է Առաջին Հանրապետութեան որոշ իրադարձութիւնների, դրանց համատեքստում գրողի քաղաքական գործունէութեան, մասնաւորապէս՝ 1920 թ. Մայիսին նրա ղեկավարած պատուիրակութեան մասին՝ անդրադառնալով որոշ զուգահեռների պատմութեան եւ «Ինկած բերդի իշխանուհին» ողբերգութեան միջեւ՝ իր իսկ խօսքերով ասած չանդրառանալով այդ «ողբերգութեան մէջ Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկման

պատճառներն ակնարկող բոլոր այլասացութիւններին՝ մանաւանդ որ դրանք առաւել թափանցիկ են «Օշին Պայլ» ողբերգութեան մէջ»[1]:

Լ. Շանթի՝ Առաջին Հանրապետութեան տարիների հասարակական-քաղաքական գործունէութեանն այս կապակցութեամբ աւելորդ անգամ մենք չենք անդրադառնայ, մանրամասնօրէն կանգ կ՛առնենք միայն Առաջին Հանրապետութեան անկումից յետոյ՝ 1921 թ.-ին գրուած եւ անկախութեան հերթական կորստի յուսալքութեամբ ստեղծուած այս ողբերգութեան՝ մեր կողմից նկատուած բոլոր այլասացութիւնների, դրանցում պատկերուած պատմական իրադարձութիւնների պատճառահետեւանքային կապի ու խոհափիլիսոփայական ընդհանրացումների վրայ:

Որքան էլ փորձենք Լ. Շանթի այս ստեղծագործութեան մէջ փնտռել Առաջին Հանրապետութեան անկման պատճառների արձագանգները, այն աւելի լայն պատմական կոնտեքստ ունի. չէ՞ որ պատմական իրադարձութիւններն իրենց հերթին մեկուսի չեն եւ բխում են մէկը միւսից, այսինքն՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկումը Եղեռնի, իսկ Հայաստանի խորհրդայնացումը Առաջին Հանրապետութեան անկման շարունակութիւնն է: Սրանք պատճառահետեւանքային կապի մէջ գտնուող պատմական իրադարձութիւններ են եւ այդ շաղկապմամբ էլ ներկայացուած են Լ. Շանթի ողբերգութեան մէջ:

Նախ՝ այստեղ հնարաւոր չէ չնկատել Ցեղասպանութեան արձագանգը. յիշենք իշխանուհի Աննայի ողբն իր մորթուած զաւակների համար, որ բաւական յուզիչ ու տպաւորիչ է ներկայացուած. մանուկների մահը ուղղակի սահմռկեցնող է: Հին յունական ողբերգութիւնների, յատկապէս Սոֆոկլեսի հետեւութեամբ՝ Լ. Շանթը խուսափում է պատկերել իշխանուհու զաւակների մահուան դժնի տեսարանն իր սահմռկեցուցիչ մանրամասներով. նա նախընտրում է թերասացութիւնը, սակայն աստիճանաբար գրողն այնպիսի նուրբ ակնարկներ ու յուշումներ է հրամցնում, որ մանկասպանութեան մանրամասները պատկերացնելուց հրաժարուած ընթերցողի ենթագիտակցութիւնն ակամայից է պատկերացնում այդ ամէնը՝ ստիպելով վերապրել բաց թողնուած տեսարանի ողջ ահուսարսափը: Ահա եւ Աննայի երազը, որում յայտնւում են զաւակները՝ դատարկ ակնախոռոչներով, կիսամերկ՝ «մարմինները դեղնա՜ծ, կնճռած, հողոտ ու կա-

[1] Տե՛ս՝ «**Լեւոն Շանթ 140**» գիտաժողովի նիւթեր, Եր., ԵՊՀ, 2009, էջ 173:

նաչաւուն: Պզտիկիս վիզը այնպէս խե՛ղճ-խեղճ կախուեր էր, սուրը ուսին էր դիպեր, գլուխը շիտակ պահել չէր կրնար»[2]: Ու. Շէքսպիրի «Մակբէթ»-ի տեսարաններից մէկի նմանութեամբ ստեղծուած այս տեսարանը իսկական մղձաւանջի է վերափոխում իրականութիւնը, եւ կասկած չկայ, որ այս ողբերգութեան սահմռկեցուցիչ պատկերների մէջ թարմ է դեռ Եղեռնի տպաւորութիւնը. թւում է, թէ որդեկորոյս իշխանուհու կերպարը յղացուած է որպէս մայր հայրենիքի մարմնացում, բայց իբրեւ խորհրդանիշ յղացուած կերպարը կեանք է առնում, դառնում լիարիւն մարդկային բնաւորութիւն, դառնում աւելին, քան խորհրդանիշը. կեանքի իմաստը սպառած, բայց յանկարծ ապրելու որոշում կայացրած իշխանուհու արարքներից, Գող Վասիլի զաւակների հետ նրա մտերմութիւնից այս կնոջ մտադրութիւնները դեռ չգուշակող ընթերցողը սարսափով է կռահում, որ Քեսունի իշխանի կողմից սեփական զաւակների սպանութիւնը կնոջ վրիժառութիւնն է իր զաւակների մահուան համար: Ողբերգութեան ժանրում սարսափն առաջանում է, երբ մարդն անզօր է դառնում ինչ-որ զգացմունքի ձեռքին: Հոմերոսի «Իլիական»-ում աստուածները զայրոյթ էին ուղարկում Աքիլլեսին եւ այդպէս վճռում նրա ճակատագիրը: Լ. Շանթի ողբերգութեան մէջ վրիժառութեան աստուածը, որ բնականաբար իբրեւ գործող անձ բացակայում է, նրան դարձնում է ճակատագրի, անհրաժեշտութեան գործիք: Իշխանուհին ստիպուած է վրիժառութեան աստծուն զոհաբերել Վասիլի զաւակներին, որոնցից մէկի հանդէպ նա նուրբ ու քնքուշ մայրական զգացմունքներ է տածում, իսկ միւսին սիրահարւում է: Զգացմունքի եւ ճակատագրի անհրաժեշտութեան այս բախումից էլ առաջանում է ողբերգականը: Աննայի համար այդ վրէժը կեանքի իմաստի ի սպառ կորուստ էր նշանակում, եւ նա ինքնասպան է լինում: Եթէ բերդը հայոց պետականութեան խորհրդանիշն է, իսկ «ինկած բերդը»՝ հայոց պետականութեան անկումը, ապա որպէս մայր հայրենիքի մարմնացում յղացուած իշխանուհու վրիժառութիւնը Ցեղասպանութեան վրիժառութեան Ոգին է խորհրդանշում:

Լ. Շանթի այս երկում, որ յիրաւի գրուած է հին յունական ողբերգութեան բոլոր կանոններով, ասես պատմութեան ողբերգական իրադարձութիւնների պատկերման լաւագոյն կերպը ողբերգութեան ժանրը կարող էր լինել, կարելի է նկատել նաեւ քսաներորդ դարասկզբի

[2] **Շանթ Լ.**, Երկեր, Եր., 1989, էջ 677:

Կիլիկեան իրադարձութիւնների անդրադարձը: Յիշենք 1920 թ.-ի ամրանը Միհրան Տամատեանի գլխաւորութեամբ եւ Ֆրանսիայի հովանաւորութեամբ Կիլիկիայի հայկական պետութիւն («Ինքնավար Հայաստան») ստեղծելու փորձերը: Պատմաբան Արարատ Յակոբեանի Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութեան համառօտ ակնարկում այդ դէպքերի մասին կարդում ենք. «Շուտով Թուրքիան փոխեց իր քաղաքական կողմնորոշումը դաշնակցեց ե՛ւ Անգլիայի, ե՛ւ Ֆրանսիայի հետ: Իսկ վերջիններս էլ, առաջնորդուելով իրենց շահերով, փաստօրէն հրաժարուեցին Հայոց դատի պաշտպանութիւնից: Առաջինը հայ ժողովրդի շահերը ոտնահարեց Ֆրանսիան, որը մինչ այդ ստանձնել էր Կիլիկիայի հովանաւորութիւնը եւ այդ թւում՝ կիլիկիահայութեան ինքնավարութեան պաշտպանութիւնը: Սակայն շուտով թուրք-ֆրանսիական համաձայնութեամբ ֆրանսիական զինուած ուժերը լքում են Կիլիկիան եւ տեղի հարիւր հազարաւոր հայութեանը թողնում թուրքական բանդաների երախը»[3]:

Լ. Շանթի ողբերգութեան մէջ սկզբից հնչում է այն մօտիւը, որ բերդն առնում է իւրայինի՝ Կամսարական իշխանի մատնութեամբ: Փաստօրէն պատմութեան դառը փորձը ցոյց է տալիս, որ մեզ մատնում են հենց հաւատակից պետութիւնները. Հայկական պետականութեան վերականգնման փորձերը Կիլիկիայում արիւնայեղութեամբ կանխւում են ֆրանսիացիների, իսկ արդէն 1918թ.-ի Մայիսի 4-ին ձեւաւորուած եւ կայացման ուղին բռնած Առաջին Հանրապետութիւնը տապալւում է Ռուսաստանի ջանքերով: Այս առթիւ Սամուէլ Մուրադեանը հետաքրքրական մի դիտարկում ունի. «Մեր պատմութիւնն արդէն ունէր այդպիսի ցաւագին օրինակներ. 428 թ. Արշակունիների թագաւորութեան վերացման, 1045 թ. Բագրատունիների թագաւորութեան կործանման եւ Անին թշնամուն յանձնելու մէջ փոքր չէր հայ դաւաճան նախարարների ու հոգեւորականների դերը: Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումն էլ առանց կենտրոնախոյս հայ իշխանների ու լատինամոլների ազգադաւ պառակտիչ գործունէութեան չի եղել: Կիլիկիայի ողբերգութեան մէջ մեղքի իր մեծ բաժինն, այո՛, ունէր հենց բիւզանդական կայսրութիւնը, որը ոչ միայն չսատարեց իրեն դաշնակից ու հաւատարիմ քրիստոնեայ պաշտպանիչ վահանին, որն

---

[3] **Յակոբեան Ա.**, Հայաստանի Հանրապետութիւն (1918-1920 թթ.), Եր., «Հայաստան», 1992, էջ 25-26:

ամուր պատնէշ էր Արեւելքի մահմեդական գիշատիչ ախորժակների յարձակումների դէմ, այլեւ, Հայաստանն ու Կիլիկիան թուլացնելով, աննկատ փորեց հենց իր գերեզմանը:

Քրիստոնեայ Ռուսական կայսրութիւնը եւս, միւս գերտերութիւնների նման, Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի հետ իր սիրախաղերով, հայոց Մեծ եղեռնը չկանխելու պիղատոսական գործունէութեամբ դարձաւ նրա մեղսակիցը: Աւելի ճակատագրական դեր խաղաց Խորհրդային Ռուսաստանը, որը իր թուրք դաշնակցին տրամադրած ռազմական ու նիւթական մեծ օգնութեամբ նպաստեց, որ Թուրքիան արեւմտահայերի վերջնական բնաջնջումով աւարտին հասցնի եղեռնի պետական ծրագիրը: Եւ դրանով չբաւարարուելով՝ նաեւ հայ բոլշեւիկների ձեռքով խարխլեց Հայաստանի Հանրապետութիւնը: Իսկ բոլշեւիկների գործունէութեան ուղղակի պատկերումը նրանց գերիշխանութեան պայմաններում, մեղմ ասած, նպատակայարմար չէր: Ահա ինչու Լ. Շանթը նախընտրեց «բիւզանդական դարերում» Կիլիկեան հայկական թագաւորութեան կործանման պատճառների գեղարուեստական բացայայտումը՝ ընդհանրութիւններ նկատելով ու մատնացոյց անելով Հայաստանի Առաջին Հանրապետութեան ողբերգական անկման եւ կիլիկեան դարերի իրադարձութիւնների միջեւ»[4]:

«Ինկած բերդի իշխանուհին» ողբերգութիւնից մէկ տարի անց Լ. Շանթն սկսում է աշխատել «Մեր անկախութիւնը» գրքի վրայ, ուր նա անում է նոյն այս դիտարկումը. նոյն զուգահեռն է անցկացնում բիւզանդական կայսրութեան եւ Ռուսաստանի դաւադիր գործունէութեան միջեւ. «Ինչքա՜ն դժուարութիւններ է քաշած Կիլիկիայի մեր անկախութիւնը,– գրում է նա,– ոտքի կանգնելու համար: Ինչքա՜ն համեստ ու փոքր են եղեր իր սկիզբները՝ քանի՜-քանի անգամ ինկած է շնչատ եւ ուժասպառ, ընդհատուած է, կարծես վերջացաւ ամէն ինչ եւ մարեցաւ ամէն կայծ, ամէն յոյս: Բայց ահա՜ Թորոս մը, կամքի յանդուգն շարժում մը, պայմաններու յաջող փորձ մը, եւ անկախութիւնը նորէն ելած է ոտքի, նորէն կը մաքառի ու իր ոտքերուն աւելի ամուր տեղ կ՚ընէ, եւ կը հասնի ծովուն, եւ կը հասնի թագի, հակառակ շրջապատի յոյն, թուրք, լատին դրացիներու անվերջ դաւին, դիմադրութեան, յարձակումներուն ու թշնամութեան:

---

[4] Տե՛ս՝ «**Լեւոն Շանթ 140**» գիտաժողովի նիւթեր, էջ 164:

Նոյն վիճակը եւ նոյն ապագան կը սպասէ մեզի եւ հիմա: Եթէ մէկ կողմէն՝ մեր արդի պայմանները աւելի ծանր են, քանի որ կամաց-կամաց նահանջող Բիւզանդիայի մը փոխարէն, հետզհետէ բարձրացող ու արեւմտացող Ռուսաստան մը ունինք հիմա մեր կողքին, բայց միւս կողմէն՝ մեզի հետ է ժամանակի ոգին ու քաղաքակրթութեան պահանջը»[5]:

Կարսի ու Ալեքսանդրապոլի նուաճման ականատեսներից մէկը՝ Ն. Օդաբաշեանը գրում է. «Զարմանալի բան. կարծես թէ թուրքերը մեր մէջ լրտեսներ ունէին եւ մեր զօրքերի բոլոր շարժումները գիտէին. միշտ աշխատում էին մեր թոյլ կողմից օգտուել»[6]: Իսկ իրականում մատնիչները հենց «իւրային» բոլշեւիկներն էին: Լ. Շանթի ողբերգութիւնում իշխանուհի Աննան ուղղակի սարսափած է իրեն շրջապատող ու թաքնուած մատնիչ ու դաւադիր իւրայինների քանակից: «Բոլոր դռներուն, բոլոր անցքերուն պահակ կը դնեն»[7]: «Փաստօրէն,– գրում է պատմաբան Ա. Յակոբեանը,– Կարսն ու Ալեքսանդրապոլը նուաճուեց բոլշեւիկեան Ռուսաստանի զէնքով»: Բերդում իշխանուհու առջեւ իւրային է փորձում ձեւանալ նաեւ Քեսունի իշխան Վասիլը: «Սո՜ւտ է,– նրա դէմքին է ճշմարտութիւնը նետում իշխանուհի Աննան,– դուն չգրաւեցիր իր բերդը. դուն դաւեցիր, դուն խարդախեցիր, դուն գողցար այս բերդը անոր ձեռքէն»[8]: Վասիլը Գող մականունը վաստակել է հենց տարբեր ամրոցներ գրաւելով եւ բռնակցելով իր իշխանութեանը՝ ամենուր փորձելով հանդէս գալ որպէս բարեկամ ու ազատագրող: Գող Վասիլի արարքներում դժուար չէ նկատել հենց ագրեսոր չերեւալու միտումով ազգերի ազատագրող ներկայացող, բայց իրականում պետութիւններն իրեն բռնակցող բոլշեւիկեան (Լ. Շանթը բոլշեւիզմը դիպուկ կերպով բնորոշում էր որպէս *սոցիալական ցարիզմ*[9]) Ռուսաստանի կայսերական նկրտումները: Փաստօրէն բոլշեւիկեան Ռուսաստանի միջոցով էլ տապալուեց Առաջին Հանրապետութիւնը, որն իր կարճատեւ գոյատեւման ընթացքում խիստ որոշակի ձեռքբերումների էր հասել տնտեսական, սոցիալական, մշակութային եւ այլ ոլորտներում: Այս երկդիմի քաղաքականութեան արձագանգը դրամայում ակնարկւում է Գող

---

[5] **Շանթ Լ.**, Մեր անկախութիւնը, Եր., Հայրենիք, 2011, էջ 103:
[6] «**Հայրենիք**», Պոսթըն, հ. 4, 1943, էջ 67:
[7] **Շանթ Լ.**, Գեղարուեստական գրութիւններ. 1909-1921, Պէյրութ, 2008, էջ 290:
[8] **Նոյնը**, Երկեր, էջ 592
[9] **Նոյնը**, Մեր անկախութիւնը, էջ 13:

Վասիլի խօսքի ու գործի հակասութեամբ. իր խօսքերում նա ներկայանում է իբրեւ խոհուն այր, այնինչ արարքներով արիւնարբու ու ամէն սրբութիւն ոտնակոխ անող բռնակալ է, որ իշխանութեան ճանապարհը հարթում է դիակների ու զոհերի վրայով՝ իշխանութեան աստծուն զոհաբերելով նոյն-իսկ իր զաւակների կեանքը: Լ. Շանթի ողբերգութեան մէջ հեղուող արեան կարմիրը դառնում է իւրօրինակ գունային խորհրդանիշ: Ողբերգութեան առաջին տեսարանի սկզբում Աննան յիշում է իր զաւակներից մէկին՝ Ցոլակին, որ ապշած նայում է մորթուող գառանը, եւ այսպէս անմեղ արիւնը դառնում է այս ողբերգութեան լեյտմոտիւը: Այդպիսին էր նաեւ արեամբ իր ճանապարհը հարթած եւ, ասես, իր դրօշի գոյնն այդ արեան գոյնից փոխ առած Ռուսաստանի նոր իշխանութիւնը, որ իր լաւագոյն զաւակներին՝ իր մտաւորականութեանը, աքսորում ու գնդակահարում էր:

Բերդը նուաճելուց յետոյ Վասիլի՝ ազնուականներին ոչնչացնելու, իսկ հասարակ գիւղացուն սիրաշահելու նենգամտութեան մէջ ակնարկւում է *սոցիալական ցարիզմի* այս քաղաքականութիւնը. «Չնեղե՛ս երբեք գիւղացին. ան է, որ կու տայ մեզի մեր հացը ու մեր զինուորը. եւ իշխան-ներս շատ պէտք ունինք իր հացին ու իր զինուորին»[10]: Դժուար չէ նկատել նաեւ բերդի նուաճումից յետոյ պալատում տիրող անհոգի մթնոլորտն ու որովայնամտութիւնը, մարդու հոգու եւ նրա դրսեւորումների հանդէպ հեգնանքն ու ծաղրը: «Հոգի ըսածդ սովորութիւն է, ինչ բանի որ մարդս կը վարժըւի: Իսկ մարդս կը վարժըւի ամէն բանի»[11],– դառը հեգնանքով կրկնում է Աննան Վասիլի խօսքերը, իսկ իշխանը փորձում էր Աննային մոռանալ տալ սեփական անցեալն ու ինքնութիւնը. չէ՞ որ ազգերի ինքնութեան ճնշումը *սոցիալական ցարիզմի* քաղաքականութեան գլխա-ւոր ծրագրերից մէկն էր: Խորհրդանշական է նաեւ Վասիլի իսկ ձեռքով անդունդը հրուած որդու՝ ազնիւ Սեպուհի՝ մարդկութեան խաղաղ ու համերաշխ ապագայի երազն իր սրտում կրող պատանու մահը. Սեպուհը համոզուած էր, թէ գալու է «գութի, արդարութեան թագաւորութիւնը»: Կը գայ ժամանակը, ասում է նա, երբ «ամէնքը կը դառնան եղբօր պէս»[12]: Բայց նա սպանւում է սեփական հօր ձեռքով. խեղդամահ է արւում,

---

[10] **Նոյնը**, Երկեր, էջ 594:
[11] **Նոյն տեղում**, էջ 605:
[12] **Նոյն տեղում**, էջ 627:

այսինքն՝ յաւերժօրէն անդունդն է նետում մարդկութեան լուսեղէն գալիքի հնարաւորութիւնը, որ կոմունիզմի իդէալն էր՝ անիրագործելի իդէալը: Սեպուհի մռայլ մահը եւ հօր իշխանատենչութեան զոհը դառնալը Լ. Շանթի յիշեցումն ու մռայլ կանխատեսումն է. մարդկութիւնն այդ ապագան կարող է նուաճել միայն սեփական կրքերն (այդ թւում նաեւ իշխանատենչութեան կիրքը) ու ցանկութիւնները զոհելու ճանապարհով: Հակառակ դէպքում մարդը կանգնելու է իր դիմացինին զոհաբերելու անհրաժեշտութեան առջեւ, այսինքն՝ ողբերգութիւնն ու դժբախտութիւնը նրանից անմասն չեն լինելու: Եւ մի՞թէ հենց այդ իմաստը չէին կրում իրենց մէջ հին յունական ողբերգութիւնները, որտեղ աստուածները մարդկանց ճակատագրի ծուղակն էին գցում՝ զգացմունքներ ու կրքեր ուղարկելով նրանց:

Резюме

Причины падения Первой Республики
В драме Левона Шанта “Княгиня павшей крепости”

Л. Галстян

Данную драму Шанта нужно рассматривать в более широком историческом контексте: ведь исторические события в свою очередь не изолированы и исходят одно из другого, то есть, падение Первой Республики Армения являлось продолжением Геноцида, а советизация Армении являлось продолжением падения Республики Армения. Это исторические события, которые находятся в причинно-следственной связи, и именно в этом соединении представлены в трагедии Шанта.

Summary

Causes of falling of the First Republic
In the drama of Levon Shant “The princess of the fallenfortress”

L. Galstyan

The given drama of Shant should be viewed in a broader historical context: after all, historical events in their turn are not isolated and proceed from one another, that is, the fall of the First Republic of Armenia was a continuation of the Genocide, and the Sovietization of Armenia was a continuation of the fall of the Republic of Armenia. These are historical events that are in a causal relationship, and just in this connection that they are presented in Shant’s tragedy.

ԱՆՀԱՏԻ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՀՐԱՆԴ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ «ՆԱՆԱ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ԿԱՄՈՒՐՋԸ» ՎԻՊԱԿՈՒՄ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ
բ.գ.թ., Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ բանասիրական
բաժանմունքի դեկանի տեղակալ,
Վ. Պարտիզունու ան. Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա
դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր - հին կամուրջ, իշխանութիւն, անհատ, հայրենիք, Անկախ Հայաստանի Առաջին Հանրապետութիւն, թալան, պետութիւն, խորհրդանիշ, ժողովուրդ, վիպակ:

Ключевые слова: старый мост, власть, индивид, родина, Независимая Первая Республика Армении, грабёж, государство, символ, народ, повесть.

Key words: old bridge, power, individual, homeland, The Frst Independence Republic of Armenia, robbery, state, simbol, symbol, nation, story.

Հայ լինելը դժուար է, բայց անհնարը հայ չլինելն է:
Հրանդ Մատթէոսեան[1]

Դարերից եկած մի նուիրական երազանք ունենք՝ ապրել ամուր ու արդար, հզօր ու հպարտ հայրենիքում: Այդ երազանքի ետեւից ընկած երկար ենք քայլել... սակայն ամէն անգամ երազանքին մօտենալու ուրախութիւնից երազի ու երազախաբութեան որոգայթն ենք ընկնում ու գերնպատակը մոռացած՝ ցնորքի ետեւից վազում, բայց հանդիպելով մեր իսկ կոշտ ու առաձգական դիմադրութեանը՝ առաջ անցածի կրկնակի չափով ետ ենք մղւում... Սա գուցէ իրատեսութեան բացակայութեան նշա՞ն է, սակայն ամէն անգամ անիծում ենք բախտն ու փորձում, բացի մեզանից բոլորին մեղաւոր ճանաչելով, ենթարկուել մեր իսկ յօրինած թուացեալ ճակատագրին...

Բացառութիւն չէր քսաներորդ դարասկզբի առաջին տասնամեակի վերջը եւ որպէս արդիւնք՝ Անկախ Հայաստանի Առաջին Հանրապե-

[1] **Մատթէոսեան Հր**., Սպիտակ թղթի առջեւ, Եր., 2004, էջ 295: